Այդտեղ նստող հոգևորական ֆեոդալը կարող էր երկար և հաջողությամբ դիմադրել դրսից հարձակման և պետք չունենալ աշխարհական ֆեոդալի զինված օժանդակության, մանավանդ որ անհամեմատ ավելի մեծ եկամուտների տեր էր։ Տաթևը՝ նայելով այն գյուղերի ցուցակներին, որոնցից նա կանոնավոր եկամուտ էր ստանում, բոլոր դարերում ոչ միայն Սյունիքի, այլև Հայաստանի այլ գավառների ամենահարուստ վանքերից մեկն էր։ Ըստ Ստեփաննոս Օրբելյանի պատմության կցված մի ցուցակի՝ նա եկեղեցական հարկ էր ստանում տասնչորս գավառների 677 գյուղերից[43]։ Ավելի ուշ ժամանակի ցուցակով այդպիսի գյուղերի թիվն էր 260, իսկ ստացած հարկի քանակը հավասար մոտ 600 հազար պարսկական շահի, կամ 150 հազար ֆրանկի, չհաշված անմիջապես իրեն ենթարկված և սեփականություն կազմող գյուղական հողերից, այգիներից, արոտավայրերից, սրանոցներից (ձիթհանքերից) և այլ արդյունաբերական ձեռնարկումներից մտնող արդյունքները։ Սյունյաց մեծահոգի և մեծահավատ իշխաններն ու ռազմիկները առատաձեռնությամբ իրար հետ մրցում էին վանքի սրբությունների՝ սուրբ խաչափայտի, Քրիստոսի եղբայր Հակոբի, բազմաթիվ սուրբերի մասունքների, հրաշագործ շարժվող սյունի խնամքն ու պահպանությունը ձեռք բերելու համար։ Տաթևի վանքը բավականին ուժ ուներ երթևեկողներին և մանավանդ վաճառականներին թե՛ օթևան և թե՛ պաշտպանություն տալու։

Ուրիշ վանքերն ավելի հաճախ պետք էին ունենում հարևան իշխաններից ռազմական հովանավորության։ Թե այդ աշխարհիկ ռազմիկ տարրի հովանավորությունը, բացի հողագործ գյուղացիներից, հասարակության ո՞ր խավերն էին առանձնապես որոնում՝ մի շատ բնորոշ պատկեր է տալիս Գորիս գյուղի շենքերի դասավորությունը։ Այդտեղ մի սեպ ժայռի վրա բազմած է բերդը՝ իր բնական հզոր ամրություններով։ Անմիջապես ժայռի տակ ծվարել է մելիքի տունը, որը իր բազմաթիվ վերակառուցումների միջոցին աշխատել է ոչ մի կերպ չհեռանալ գյուղի վրա իշխող այդ ամուր դիրքից։ Նրանից ավելի ներքև, նրա թևի տակ, պատսպարվել է եկեղեցին։ Գյուղի ամենաստորին թաղում, գրեթե գետակի եզրին՝ քարանձավների մեջ, մարմնավոր և հոգևոր զորությունների հովանու տակ, ապահովություն է գտել քարվանսարան, որտեղ կանգ էին առնում ճամբորդ վաճառականներն իրենց բարձած քարավաններով։ Քարվանսարայի քարատակների մեջ բացի օթևանելու հարմարությունից՝ նրանք գտնում էին ապաստան իրենց գրաստների համար, ինչպես և ապահով զետեղարան ապրանքների համար։ Ամրոցի, իշխանական բնակարանի, եկեղեցու և վաճառականական օթևանի այս դասավորությունը շատ է հիշեցնում նույնանման դասավորություն եվրոպական ֆեոդալական երկրներում, առավելապես Հռենոսի ափերին, և անշուշտ թելադրված է հասարակական միանման հանգամանքներով։ Քարվանսարան այժմ շատ է խանգարված. քարայրները լցված են ամեն տեսակ աղբով, պատերից թափվել են երեսի սվաղի շերտերը, խոնավությունը և պակասավոր օդափոխությունն ավերել են նախկին պատրհանները, տախտաձև բարձրացումները։ Իշխում է կատարյալ մոռելություն....

---

[43] Գլ. ՀԴ։